ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է նոր խմբագրությամբ՝

«ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
28.11.2019թ. թիվ 91-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝10.12.2019թ.-ից

«SMS-ԻՆՖՈ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ԴԻՄՈՒՄ

«SMS-ինֆո» ծառայության տրամադրման

ք. Երևան Ամսաթիվ՝ ____/_____/20____թ

ՀԱՃԱԽՈՐԴ	
ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԸ	
ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ	

Ցանկանում եմ վերը նշված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության/ների (կարճ տեքստային հաղորդագրություն) միջոցով տեղեկանալ՝

□ Վարկ(եր)ի մարման մասին նախորդ օրը **ներառյալ մարման ենթակա վարկի գումարը**,
□ Վարկ(եր)ի մարման մասին նախորդ օրը **առանց մարման ենթակա վարկի գումարի**,
□ Ընթացիկ հաշիվների մուտքերի և ելքերի, մնացորդի վերաբերյալ,
□ Ավանդ(ներ)ի մարման մասին նախորդ օրը,
□ Սակագներում և պայմաններում փոփոխությունների մասին:
□ Բանկի կողմից մատուցվող ընթացիկ և նոր ծառայությունների մասին ծանուցում/գովազդ:

Սույնով Հաստատում եմ, որ ծանոթացել եմ «Հաճախորդների բանկային հաշիվների բացման և այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին» և համաձայն եմ դրանց հետ:
Ստորև իմ ստորագրությամբ հաստատում եմ Բանկի հետ «SMS-ինֆո» ծառայության սպասարկման պայմաններով պայմանագրի կնքման փաստը:

ՀԱՃԱԽՈՐԴ

հաճախորդի լրիվ անվանումը

գտնվելու վայրը / հասցեն/

էլ. փոստ

Ուշադրություն.

Հարգելի Հաճախորդ, SMS հաղորդագրությունները պաշտպանված չեն և նրանց բովանդակությունը կարող է հասանելի լինել երրորդ անձանց (հեռախոսային օպերատորներ, և այլն): Խորհուրդ է տրվում անմիջապես ջնջել ստացված հաղորդագրությունները դրանք կարդալուց հետո:

SMS-ԻՆՖՈ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն պայմաններով Բանկն իրականացնում է Հաճախորդին SMS-ինֆո ծառայության մատուցում, որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում կարճ տեքստային հաղորդագրության (այսուհետ՝ SMS հաղորդագրության) միջոցով ստանալ տեղեկատվություն ինչպես իր ընթացիկ, ավանդային և վարկային և այլ հաշիվների, այնպես էլ Բանկում կատարված սակագնային և այլ պայմանների փոփոխությունների մասին, ստանալ տեղեկություններ ընթացիկ հաշիվների մուտքերի, ելքերի և մնացորդների վերաբերյալ
2. Ստորագրելով Բանկի կողմից հաստատված SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է սույն պայմաններին, գիտակցում և ընդունում է SMS հաղորդագրությունների պաշտպանվածության համեմատաբար ցածր մակարդակը և պատասխանատվություն է կրում այլ անձանց համար իր հեռախոսի անհասանելիության ապահովման, իր կողմից որևէ կասկածի դեպքում Բանկին տեղեկացման, ինչպես նաև կարդալուց անմիջապես հետո Բանկի կողմից ուղարկված հաղորդագրությունների հեռացման համար:
3. Բանկի կողմից մատուցվում է SMS-ինֆո ծառայության երկու տարատեսակ.
   ա) <u>**Նախազգուշացնող հաղորդագրություններ (Alert service):**</u> Հաճախորդի ընտրությամբ պարբերականության սկզբունքով հաճախորդին են ուղարկվում այնպիսի տեղեկություններ ինչպիսիք են վարկ(եր)ի, ավանդ(ներ)ի մարումների կամ Բանկի սակագնային փոփոխությունների, հաշիվներին մուտքերի և ելքերի մասին:
   բ) <u>**Հաճախորդի նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրություններ (Pull service):**</u> Հաճախորդի նախաձեռնությամբ Բանկի կողմից տրամադրված կարճ համարին ուղարկվում է նախօրոք սահմանված և Հաճախորդին տրամադրված լատինատառ բառ (տառակապակցություն), ինչի հիման վրա Բանկն ուղարկում է տվյալ բառին համապատասխանող տեղեկատվությունը:

   Վերոնշյալ լատինատառ բառերի (տառակապակցությունների) ցանկը սահմանվում է Բանկի կողմից նախօրոք և տրամադրվում Հաճախորդին ըստ պահանջի:

   SMS-ինֆո ծառայության մատուցման դիմումը ստորագրելով Հաճախորդները հաստատում են, որ ծանոթացել են Հաճախորդների նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրությունների համար կարճ հեռախոսահամար տրամադրող ընկերության (օպերատորի) կողմից սահմանված սակագնին:
4. Բանկը պարտավոր է՝
   ա) SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը ընդունելու պահից 2 բանկային օրվա ընթացքում ակտիվացնել վերոնշյալ ծառայությունը Հաճախորդի համար:
   բ) Հաճախորդի գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմումի հիման վրա ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայությանը:
   գ) SMS-ինֆո ծառայությանը տրամադրման պայմաններում որևէ պայման վատթարացնող փոփոխության դեպքում այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ պատշաճ կերպով տեղյակ պահել Հաճախորդին:
5. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայության մատուցումը Հաճախորդին, եթե Հաճախորդն ունի բանկային հաշիվների վարման և սպասարկման սակագներով նախատեսված չվճարված գումար:
6. Հաճախորդը պարտավոր է՝
   ա) <u>անհապաղ տեղյակ պահել Բանկին հեռախոսահամարի կորստի կամ փոփոխության մասին, ինչպես նաև հավաստիանալ, որ Բանկում գործում է իր կողմից տրամադրված ճիշտ հեռախոսահամարը, քանի որ սխալ հեռախոսահամարի տրամադրման դեպքում կարող է հրապարակվել բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ինչի համար Բանկը պատասխանատվություն չի կրի:</u>
   բ) վճարել Բանկին՝ համաձայն Բանկային հաշվի բացման և վարման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Սակագների և Պայմանների,
7. Հաճախորդն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը կամ հրաժարվել դրանից ներկայացնելով գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմում:
8. SMS-ինֆո ծառայությունը հանդիսանում է բանկային հաշիվների սպասարկման տարր և դադարեցվում է հաշվի (հաշիվների) սպասարկումը դադարեցնելուն (հաշիվը (հաշիվները) փակվելուն) պես:
9. Բանկն իրավունք ունի դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով Հաճախորդին: